

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ "ՆՈՐ ՕՐ", Ի

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ Է ՔՂԹԱԿՅՈՒԹԻՒՆ

ՊԵՏԻ Է ՈՒՂՂԱԿ ԱՐ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի

ԳԱՀԻՐԷ

Նամակատուփ Թիւ 117

DIRECTION DU JOURNAL

NOR-OR

CAIRE, B. P. N° 117

Զեռագիրներէ ետ չեն դարձուիր

Ukrainoestr. ժ. ՄԻՒՆԻԹԷ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Սեփականութիւն ԼՍԱՐՈՆ-ԲՆԹԵՐՅԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս

ՂՐԸ. ՈՂՋ

Գանիբէի համար	Տարեկան,	50
"	"	Վեցամսեայ 30
Շրջակայից	"	Տարեկան, 60
"	"	Վեցամսեայ 35

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	Յրանց	18
Վեցամսեայ	"	10

ԲՈՒՍԻՈՑ ԵՒ ԿՈՎԱՍՏԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	Բուրի	7
Վեցամսեայ	"	4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԻԿ Է

ԵՒ ԹՂԵԱՍԱՐԻ ՇԱՐԻԸ

Թերթին Վարչութեանը վրայ է:

Թերթիս արտոնատիրոջ մեզ ուղղած նամակը՝ ի ստորև կը հրատարակենք թարգմանութեամբ հանդերձ:

Le Caire, le 6 juin 1900

Monsieur,

Je vous remercie d'avoir pensé à moi pour la gérance de votre nouveau journal NOR-OR.

Vous connaissez trop mes sentiments pour l'Arménie, je n'ai donc pas besoin de vous en dire davantage.

Je souhaite que le succès couronne vos efforts. C'est avec la foi que l'on triomphe de toutes les difficultés.

Bon courage, et croyez-moi,

Votre bien dévoué

J. MUNIER.

Տիար,

Ծնորհակալ եմ Ձեզ որ իմ վրայ խորհած էք Ձեր նոր թերթին «Նոր Օր» ի արտոնատիրութեան համար:

Ինք այնչափ լաւ կը ճանչնաք իմ զգացումներս առ Հայաստան, որ պէտք է չունիմ աւելի բան մ'ըսել Ձեզ այդ մասին:

Կը մաղթեմ որ յայտնութիւնը քայ պսակել Ձեր ջանքերը: Հաւատարմ կը հարթութին բոլոր դժուարութիւնները:

Գովարի՝ եղիք, և հաւատացէ՛ք զիս, Տիար,

Ձեր յոյժ անձնուէրը

ժ. ՄԻՒՆԻԹԷ

ՎՏԱՆԳԸ

Նախընթաց առաջնորդող յոյուածով մատնանիչ ընելով Հայրենիքի մէջ հաստատուած օտար որբանոցներուն անխախտ զրուցութիւնը, երբ կը ճշդէինք անոնց նշանակութիւնը, թերեւս եղան ընթերցողներ որ պահ մը փորձուեցան կարծելու թէ՛ ազգամուլութենէ ներշնչուած ըլլար ան, ու թերեւս դատապարտեցին ալ մէկ քանի հատուածները, որոնց մէջ տեսան ապերախութեան մօտեցող զգացումներու շարք մ'արտայայտութիւն: Եղան ալ որ իրենք իրենց հարցուցին. ի՞նչ, ազգամուլութիւն չէ՞ մերժել օտարին մարդասիրական նպատքը, հարուածել դուրբաշող ձեռքը, տխուր առարկութեամբ թէ՛ այն որ ազգային չէ, օտար է. ու օտարը՝ միասակար: Ազգամուլութիւն չէ՞ յարիւ փարիւ հայրենի փուռ ու խախտ աւանդութիւններու, կոխուելով քաղաքակրթութեան ընծայած բարիքները . . . Մարմնացած ապերախութիւնը չէ՞ օտար որբանոցներու ճակարկ գրոշմել

ապանդանոց մակրի՞րը . . . Յամառ տգիտութիւն չէ՞ թողուլ որ մերկ անօթի մեռնին մեր որբերը, միակ պնդումով թէ՛ անոնք օտարներու ձեռքերուն տակ, զորկ կը մնան ազգային դատարարակութենէ . . .

Խմբագրութեան շուրջը կազմուած կարծիքներու անկեղծութիւնը յարգելով՝ կուզանք հրապարակ նետել հարց մը, որ օրուան հրատապ հարցն է, և որ ամեն ժամանակի այժմէութիւնն ունի. դատարարակութեան հարցն է դա, սցուած մեր աչքին առջև, իր բոլոր կնիքներով ու բարդութիւններով:

Դարուս բոլոր ազատ մտածողները, կամ ազգասիրտեանները, համարու են ու միաբան ընդունելու թէ՛ դատարարակութիւնը կը կազմէ կը բարձրացընէ մարդկութիւնը. այդ կազմող, կազմուող ու բարձրացընող տարրին տեսակին ու ընթեան հետ սերտիւ կապուած է ուրեմն մարդուն ճակատագիրը: Քաղաքակրթութիւնը զաւակն է դատարարակութեան, առանց որու, վայրենութեան ու սարսափի չըլանը չուտով կրնայ վերադառնալ: Եւ որովհետեւ շարժիչն ու ազդակն է ան, դատարարակութիւնը, մեր կեանքին, պէտք է որ յարմարի մեր խառնուածքին ու հակումներուն. Բարձրագոյն կրնանք բռնել թէ՛ մեր պատկանած ցեղին գոյութիւնն երաշխաւորող, մ.թ պաշտած կրօնքին սրբութիւնը պահպանող, մեր տոհմային բարքերն ազնուացընող, մեր ընկերային կեանքի պահանջները սերտող ու վերլուծող, անհատական շահն հանրային հետ հաշտեցնող, մեր քաղաքական բողոքներուն իրագործումը դիւրացնող, մեր պատմական փառաշուք անցեալէն՝ արիւնտ ու փշուտ ներկային բռնի հանելով, աւանդելով հրահանգիչ դասեր. մեր մտաւորական գանձերը նորանոր պաշարներով ձոխացնող. վերջապէս, տիրապետող բարբարոսութեան ազգակուլ հեղեղին դէմ՝ անկախութեան թումբը կանգնելու հարկաւոր ատաղձները հայթայթող ու հայութիւնը զէպ ՚ի ցանկալի հանգրուանն առաջնորդելու միտող դատարարակութիւն մը պէտք է որ սրբի մեր մատաղ սերնդին, ու, եթէ կարելի ըլլայ, ներկային ալ, որ, ահամայ իրատու վանութիւն, աւելի կարօտ է անոր:

Դատարարակութիւնն երկու տեսակ է ըստ մեզ. ազգային ու միջազգային. երկուքն ալ սահմանի ու բացասութեան պէտք չունին, սակայն ուրիշ տեսակ մ'ալ կայ, որ միայն կը սրբի գերի ազգերու զաւակներուն. օրինակի համար, գերմանական ընկերութիւն մը կ'երթայ Հայաստանի ներսերը կը բանայ դպրոց մը, տարածելու համար իր ցեղին ու կրօնին, իր գաղափարին ու զգացումին ոգին. ուստի կ'սկսի հոն յա-

ճախող աշակերտներուն — որոնք ընդհանրապէս Հայ կ'ըլլան — տալ դաստիարակութիւն մը, զուտ գերմանական, որ սահմանուած է պատրաստելու, ձուլելու, համագերմանական խոշոր զանգուածին մէջ խառնելու ապագայ հայութիւնը. և ինչո՞ւ չ'ըլլայ այդպէս, քանի որ տղան, հաղի տասը տարեկան, փոխանակ իր եկեղեցիի քաղցրամուսկ շարականներուն, կը վարժուի միմիջեւ սեռտոնական պաղ, անհամ ու անլի աղօթքները. փոխանակ երգելու ազգային սիրավառ երգերը, Մայր-Արաբի, Ծիծեռնակ, Ձայն տարով ծովակ, Բամբուրասան, Հիւնի եղ յունի, Տաշտիկի, Ո՞հ ի՞նչ անուշ, Թէ իսն հայրենեաց եւայլի, լայնաբաց բերնով պոռալ բարձր ու ցած իրենցներով, միապաղա՛ղ ու քնացնող երգեր կը սովորի. փոխանակ Հայկայի, Արամայ, Արայի, Տիգրանայ, Տրդատայ, Սմբատայ, Լեւոնի եռոյն, բառ առ բառ կը սերտէ բերանացի գերման ազգին հին ու ժամանակակից պատմութիւնը. այլևս Հայ տղուն համար չունին հրապուր հայրենի երկրին լեռներն ու հովիտները, տղիւններն ու անտառները. ան ինքզինք փոխադրուած կ'զգայ Բրուսիոյ անտառներուն մէջ: Ու այսպէս օր մ'ալ, երբ ելնէ դուրս կրթարանէն, ուր իր մանկութեան անուշ տարիները սահեցան, հետը կը տանի ինչ որ իւրացուցած է. ա՛լ Հայ չէ ան, արեւելցի գերման մը, հայտեսանում է՛, գերմաններէն պիտի խօսի բնականաբար ու շա՛տ շա՛տ, քիչ մ'ալ թուրքերէն:

Հոս փոքրիկ յիշողութիւն մը:

Կը յիշեմ, դեռ նոր, անցեալ տարի, երուսաղէսի Ս. Պատրիարքը փափագ յայտնած էր, որ նոյն քաղաքի գերմանական որբանոցին Հայ որբերը գային Հայոց եկեղեցին, խոստովանանքի և հաղորդութեան համար. սակայն, ամենուս ալ յայտնի է թէ՛ Որբանոցի Տեսչութիւնը կատարած չ'էր Ս. Պատրիարքին սոյն փափագը:

Ահա՛ այս օտար, ազգափոխ դատարարակութիւնն է որ կը սրբի մեզի, գերի ազգի մը միայն. ո՛չ ազգային է և ո՛չ միջազգային, այլ օտար: Ինչպէս գիտենք, ազգային դատարարակութեան նպատակն է պահել կրօնքն ու ազգութիւնը, ի վեր հանել ազգին մտաւորական ու բարոյական բարձրութիւնները, կազմել ցեղին բարքերն ու սաղանդները: Իսկ միջազգայինը կը պատրաստէ մարդք, ընկերական, համաշխարհական, կեանքի կուռնի դէմ կուրծք տալու կազմ ու պատրաստ մարդը, որ եթէ, նախապէս, գոնէ իր տղայութեան հասակին ու պատանեկութեան առաջին տարիներուն մէջ յաջողած է օժտուելու ազգային դատարարակութեամբ, և յետոյ, միջազգային հաստատութեան մը մէջ շարունակած է իր ուսումները, պիտի

տեսնէք որ ան՝ օգտակար անդամը պիտի ըլլայ ազգին, որուն կը վերաբերի, և պիտի կրնայ ապրիլ անհատի ու հասարակաց կեանքը, հասարակ գիւրդութեամբ :

Առնենք օրինակ, միտիթարը, Սերաստիոյ փառքը, որ այսօր իր պաշտեցեալ անունը անունը կրող բարձր հաստատութիւնը կտակեց Հայոթեան. ան, հայ լեզուին ու գրականութեան վերանորոգիչը, լուսաւորիչը, նախ մենատաննէն հաւաքեց իր թանկագին գոհարները, համբուրելով պահեց ձեռագիրները, որոնք յետոյ պայծառ լոյս մը սփռեցին ազգային փառահեղ անցեացիին վրայ : Ու եթէ այսօր, բովանդակ Հայ ազգը, տրոփուն սրտով ու խանդավառ հոգիով կ'սպասէ տօնել Միտիթարեան պատկառելի հաստատութեան երկհարկու մեակը, չ'կարծուի թէ՛ այդ յարգանքը կ'ընծայուի այն պատճառաւ որ Սերաստացին՝ Երուպայի մենաշնորհեալ մէկ անկիւնը՝ հոռովաբան Միտիթարեան մ'ստեղծած է, այլ կը պաշտենք ան Մեծ մարդուն յիշատակը, վասն զի իր հիմնած Հաստատութիւնը նկատած ենք լուսոյ տաճար մը, ուսկից կը հոսի լոյսը, հայ լեզուի ու հայ գրականութեան :

(Շարունակելի)

Հ Ե Ռ Ա Ք Ի Ր Ն Ե Ր

Ս. ԲԷՐԹՐՈՒՐԿ 11 ՅՈՒՆԻՍ. — Կը տեղեկանաք թէ՛ տէրութեանց հետ եղած կարգադրութեամբ մը, ռուսական դնդերէն 6000 զօրք կազմ ու պատրաստ են ի Բօրթ-Արթուր, ի հարկին Բէթրին կամ Դիէն-Չին երթալու :

Դիէն-Չին 11 ՅՈՒՆԻՍ — Չորրորդ կառախուժ մը ռուսական եւ ֆրանսական գնդերով եւ Չ թնդանութով այսօր մեկնեցաւ : Ուստի կը հասարակին ի Լանկ-Տրանկ, Բէթրինէն 40 մղոն հեռու :

ԲԱՐԻՉ 11 ՅՈՒՆԻՍ. — Խորհրդարանի ծափահարութեանց մէջտեղ, Մ. Տէլքասէ, արտաքին գործերու նախարար, յայտարարեց թէ՛ Բէթրին եւրոպական դեսպանները նորէն պիտի ազգարարին Չինու որ եթէ ինք կարգը չը վերահաստատէ, տէրութիւններն իրենք պիտի գործեն :

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԳՆԱԴԱՏԱԿԱՆ

ԱՅՎԱԶՈՎՍԿԻ ԱՌԹԻ

Հայաթ երթերէն շատերն իրենց էփեր լեցուցին փառաւոր հայ նկարչին կեանքովը. ոմանք մէկ հատիկ, գերմարդկային, ուրէ քննադատութենէ զերծ, մեծ, բարձր, գերբնական անձ մը ճանչցան ու այգպէս ալ ճանչցնել փորձեցին մեծ եռանդով. շատ փանաքի գրտնելով իրենց շտապուժը. երկինքներ հանել ուղեցին, հրաշքներ վերագրելով իրեն, յօրինելով ու յօրինելով անէքտոսներ, որոցմէ թերեւս անգեղութիւն ալ չունէր մեր, Հայոցս մեծ նկարիչը :

Ու մե՛ծ էին ողբերը ստոնց, այդ անզուգական ծովանկարչին վրայ :

Չգիտեմ ինչո՞ւ ողբ կարգալ մէկու մը, Այվազովսկիի պէս մէկու մը՝ աշխարհը թողելուն վրայ. մէկու մը, որ տարիներու պատկանելի թուով մը բեռնաւորուած, տիրացած արուեստին յարգանքը, պատիւն ու փառքը լիովին վայելած, զո՞նք երջանիկ, ճօն տարիներու հոսանքին մէջէն՝ քաղցրիկ ծիծաղն երեսէն սահած, վաշելքի դա՛ր բարձրացած, աշխարհը իր անոյշ կողմէն ճաշակելու սահմանուած, հազուադիւս երջանիկ մարդկութեան մենաշնորհեալ անհատներէն մէկն եղած էր :

Ինչո՞ւ ողբալ Այվազովսկիի պէս մէկը, որ կարող եղած էր ընել իր պաշտած արուեստին մէջ ինչ որ զիրացած էր, զգացած էր անոր մասին :

Ոգրալը Այվազովսկիի մը վրայ, մեղանչել է. մարդ

ԼՈՆՏՐԱ 12 ՅՈՒՆԻՍ. — 1500 Պօէրներ հնազանդութիւնին յայտնեցին զօրավար Պրապանդի :

«Թայմզ» Բէթրինէ կ'իմանայ թէ՛ քանի մը փոփոխութիւններ կատարուած են Չուսկ-Լի-Տամէնի մէջ. 1/4 Մանչուներ, ջերմ պահպանողական, պաշտօնի կանչուած են իշխան Դուան, Պօքարներու հզօր կուսակից, նախագահ եղած է : «Տէյլի էքսպրէս»՝ կայսեր նախկին դաստիարակ Ուէն-Դուսկ-Չոյէ ընդունած է պատգամագիր մը, որուն համեմատ կայսրը նոյն ինք բաղձանք կը յայտնէ եղբոր տեսնելու տէրութեանց համերաշխ թեւարկութեան մը հաստատուելը Չինու մէջ :

ԼՈՆՏՐԱ 12 ՅՈՒՆԻՍ. — Պօէրները պարպեցին Լէսկ'ս նէք :

ԼՈՆՏՐԱ 12 ՅՈՒՆԻՍ. — Լորտ Բոպէրթի ու Լորտ Մէթուէնի մասին երբէք լուր մը չէ առնուած յունիս 6էն ի վեր :

ԼՈՆՏՐԱ 12 ՅՈՒՆԻՍ. — Պօէրներու գերիներէն 150 Բրիտանական սպաներ ու 3000 մարդ, ազատ թողուցան ի Բրէթօրիա Պօէրները միայն 900 գերի տարին հետերին :

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Կ. Պոլսէն կը գրեն թէ՛ ռուսական դեսպանատան գործակատարը նորէն բերանացի դիմումներ ըրած է Բ. Դրան, հայրենիքին վերապարձնել աւալու համար այն Հայերը, որոնք ունին ձեռքերնին կովկասի թրքական հիւպատոսներէն հաստատուած անցագրեր. բողոքած է նաև սահմանագլխի քանի մը գաւառները բնակող հայերու ներկայ կացութեանը դէմ :

Գործակատարը պնդած է նաև որ անմիջական պատասխան մը տրուի իր այս նոր ծանուցագրին :

Այս ծանուցագիրը 21 Մայիս թուականով, կը յայտարարէ որ, եթէ Թուրքիան վերջ մը չըզնէ իրերու արդի վիճակին, Ռուսիան պիտի ստիպուի անձամբ միջամտելու այս խնդրոյն :

— Սեւանիկէն գրուած է որ վային, օսմ. կառավարութեանց ստացած հրահանգներուն համաձայն, արտօնած է վերաբացումը Բրիտանական նամակատան, զոր փակիլ տուած էր վերջերս :

— Լոնտրայի վերջին լուրերուն մէջ կը կար-

գանք որ Մարքի տը Սալզպլերի հացկերոյթ մը պիտի տայ ի պատիւ Ն. Բ. Խտիլին :

Նորին Բարձրութեան ընդունելութիւնը լորտ քաղաքապետին ու քաղաքապետական Խորհուրդին կողմէն, տեղի պիտի ունենայ ամսոյս 26ին երեքշաբթի :

— Պէրլինի «Կաղէթ տը Վօս» լրագիրը հետեւեալ կարծիքները կը յայտնէ Թրանսպալական պատերազմին վերջին լուրերուն վրայ. «Պատերազմը, կ'ըսէ, կրնայ վերջացած համարուիլ : Վերջանալու կերպը փայլուն չէ Պօէրներուն համար. մեծապէս կը նսեմացնէ անոնց մարտագոյն յղթանակները, զոր տարին պատերազմին առաջին մասին մէջ : Ո՛չ միայն Յօհաննէսպուրկ չը պաշտպանուցաւ, այլ և Բրէթօրիա լքուցաւ : Կը վախցուի թէ Պօէրներուն սոյն ընթացքը՝ չ'պակսեցնէ իրենց վերագրուած բարոյական արժանիքը :

— Ամերիկեան կաթօխիչ. — Նիւ-Եօրքի Մայիս 21 թուով լրագիրները միաբերան կ'ըսեն թէ՛ Պօէրներուն ուրիշ բան չը մնար ընել եթէ ո՛չ առանց պայմանի անձնատուր ըլլալ, քանի որ դէրք դիրքի վրայ իրարու ետեւ կը պարպեն առանց կռուելու : «Նիւ-Եօրք Թայմզ» կ'աւելցնէ, Լորտ Բոպէրթ կը զրկէ ամերիկեան քաղաքականութիւնը՝ պատերազմին վրայ վիճելու պատեհութենէն : Պօէրներու մասին մեր համակրութիւնները միայն վշտակցութիւններ կրնան ըլլալ այսուհետեւ :

— «Լա Կաղէթ տը Մլմաններ տի. Նօր» գերմանիոյ արտաքին գործոց նախարարութեան կէս պաշտօնական թերթը, կը հերքէ այն լուրը թէ՛ Պոլսոյ Գերմանական, Աւստրո-հունգարական ու Անգլիական դեսպանատանց զինուորական կցորդները՝ գերմանական կառավարութեան նախաձեռնութեամբ ճամբորդած ըլլան Հայաստան, Մակեդոնիա ու Ալբանիա, և թէ՛ Եւրոպական համաձայնութեամբ մը ծրագրուած ըլլայ այդ ճամբորդութիւնը : Գերմանական դեսպանատան քարտուղարութիւնը զեւ չ'գիտեր ո՛չ ծրագիրը, ո՛չ ալ նպատակը կամ գոյութիւնը՝ Աւստրո-հունգարական ու Անգլիական զինուորական կցորդներուն պաշտօնին :

մը որ փառաւորուէր է, լուսափայլ ստող մ'աւելցնելով հայ ժողովուրդին, հայ պատմութեան հորիզոնին վրայ : Հայ ազգին երկնքին մէջ արդէն ստանկ ատողերու սպրդումը մեծ փառք կ'աւելցնէ իրեն, հոգ չէ թէ այդ լուսաւոր կէտը շինել վերջ՝ շուտ մէկնէր կամ երկար վայելում ունենար անձնապէս :

Ա՛յն ժամանակ միայն պարտէլինք ողբալ ու դանապէս տիրիլ, երբ այդպիսի լուսաւոր կէտեր իրենց զեռ աճման շրջանին մէջ կը փայլվին, մէն մի նոր օր աւելի մեծնալու օժտո մով, ու ահա անտարբեր մանր կը ցցուի, անդէտ իր ըրած սոսկալի, արտեր բզկտող հարուածին, որով ոչ միայն մարմինը այլ անոր աստղը պիտի կասեցնէր իր զարգացումին մէջ ու զարնէր զայն, որ մեծ մոլորակ մը դառնալու սահմանուած, յանկարծ կը փշուրի, կէտ մը միայն կը մնայ, իսկ ստրասփելու ոչինչ կը մնայ երբ կը անսնես որ աստղը իրեն յատուկ սահմանը զրկած է արդէն :

Ա՛րդ, ինչպէս ըսինք, Այվազովսկին եղած էր ինչ որ կրնար ըլլալ, եղած էր նա նկարիչներու ամենէն բաղադարներէն ու եր անկնկներէն մէկը, ինչ որ հազուադիւս է արուեստի զօներուն մէջ :

Նա՛, մի՛ խրաչիք, իր արուեստին մէջ ունեցած արժանիքն աւելի մեծ համարու մը, ու խիստ մեծ գնահատում մ'ունեցաւ : Սիւալ մը, որ անոր ապրած միջավայրին խտասպանանջ չ'ըլլալէն յետոյ կեղծ էր թեւրեւս, ու այդպէս, արուեստը խրած էր :

Այսօր Ֆրանսա ամենէն աւելի անո՛ր համար Մայրերկիր ճանչցուած է որ զիսկ Գուսթաւ Գուսթաւիէրը կրկիններ բարձրացնել, իսկ տեսակ մը ստացուած (appris) արուեստագետի վարպետութիւնը (habileté) արհաւմարտել, կամ իրենց իսկական արժանիքով միայն պատուել զանոնք : Ասով չե՛մ ուզեր ըսել որ Այվազովսկին դասուած է այս վերջիններուն մէջ, բայց եւ այնպէս

առաջիններէն ալ կատարելապէս ըլլալու սահմանուած չէր, կամ չափազանց կանխահաս գովեստի ու գնահատման շտապումներ՝ պատճառ դարձած են իրեն արգիլելու համարէ այդ կէտին. ինչ որ վերջ մը կը շինէ խանձուած, ցաւալի՛ Հայ սրտերու մէջ :

Ներուի ինձ, սողունի մը, քննադատութեան փորձեր ընել Հայ ազգին մէջ ստուածի պաշտումը վայելող անհատի մը նկատմամբ :

Նկարչութեան մէջ ծովի այդ անհո՛ւն հեղուկին էր միայն որուն Այվազովսկին հակում մը զգացած էր ի բնէ կամ ընտրած. ծով, օճ, ահա ինչ որ կը հմայէր զինքը՝ կը գրգռէր իր երեւակայութիւնն ու հորիզոններ տեսնել կուտար անոր, խաղաղիկ կամ անդ, հանդարտ կամ գոռացող, մեղմիկ սիւքով մը սարսուռն, կամ սեւ, մութ ու թանձր ամպերով ծանրացած, փրփրալից, մրբկոտ ալիքներով անհզագոյ. միապաղաղ հեղուկ՝ տրեւի արծաթեայ ճառագայթներով փայլվուն՝ հորիզոնին վրայ, կամ զիշեր մը թափանցիկ ու խոնաւ լուսնով պայծառ ու անոր ըլողիկեայ պաղապշուն շողողումով՝ ծփացող ալիքներուն վրայ :

Ահա՛ ամբողջ Այվազովսկին :

Սակայն ստոնց մէջ մեր մեծ նկարչին թերութիւնը միօրինակութիւնն էր. միօրինակութիւն շարակարգութեան (composition), միօրինակութիւն յղացման (conception), միօրինակութիւն աշխատութեան (exécution) : Ուրեմն Այվազովսկին արուեստագործ (praticien) մ'էր, ուստի կը հետեւցնեմ ցաւելով որ մեծ արուեստագէտ մը՝ անհուն հանձար մը չէր նա, բառին բուն ուժովը :

Իմ սոյն սողկեր, գիտեմ, բերնի կծկումով մը պիտի կարգացուին Հայոցս մէջ, Հայե՛ր, որոնք յաճախ շատ մեծ անձնաւորութիւններ ունեցած չըլլալու դժբաղդութեամբ կամ ուրիշ բնածին պատճառներով՝ իրենց ճանչ-

Թրթո. Ամերիկեան Վիջադէպը. — Տեղային արարական թերթերուն մէջ կը կարդանք ի՞նչ Միացեալ Նահանգները պիտի ունենան եւ պիտի իզմիր ու Սեւանիկ, եթէ Թուրքիան գոհացուցիչ կարգադրութիւն մը չ'ընէ պահանջած տուգանքին :

ՄՈՒՍԹԱՓԱ ՊԵՅ ՔԱՄԵԻ ԶԱՆԸ

Ամսոյ 2ին շաբաթ օրը, Զիճիկիս թատրոնին մէջ «Էլ Լէվա» լրագրին ստորէնը Մուսթաֆա պէյ Բամէլ, ճառ մ'արտասանած է, որուն կարեւոր հատուածները կը քաղենք տեղական «Ալ Մուսայիտ» թերթէն :

Ատենաբանը կ'սկսի նախ գովել Աղեքսանդրեցիներուն հայրենասիրութիւնը, եւ կը նկարագրէ իր հայրենիքի ազդաները, համոզումի ու ժողովրդեայ ցոյց կուտայ թէ Եգիպտոս ո՞րչափ զօրաղջ է բրիտանական զրաւուրի լուծին տակ, եւ թէ՛ ազգ մ'իրաւունք չունի յարգուելու աշխարհէն, մինչեւ որ չ'ստանայ իր ազատութիւնն ու անկախութիւնը, «Ի՞նչ պատել մեր իշխաններուն համար : Ի՞նչ յարգանք մեր Աւագանիին, ի՞նչ արժանիք ունին մեր մարդերը, մինչդեռ հայրենիքը սուգի մէջ է, եւ ազգը տէրը չէ իր ճակատագրին : Ի՞նչ կրնանք սպասել երբ մեր երկիրը՝ զրաւուրի երկաթէ ձեռքովը կը կառավարուի, կամ աւելի ճիշդը, իր զաւակներուն մատնիչներէն կը մղուի դէպ ի կործանում ու գահալիծում :

Ատենաբանը կոչում կ'ընէ իր հայրենակիցներուն՝ վերականգնելու համար հայրենիքի վարկն ու թօթուելու այս ծուլութիւնն ու ամօթը :

Կը խօսի հայրենասիրութեան վրայ, յստակօրէն ցոյց տալով թէ՛ հայրենիքի սէրն է եւրոպական ազգերուն միակ զօրութեան ու քաղաքակրթութեան գործակիցը : «Հայրենասիրութիւնն է միայն, կ'ըսէ, որ այդ եւրոպական տէրութիւնները մեծ ու հզօր ըրած է : Ան է իրենց երջանկութեան ու հարստութեան պատճառը, եւ առանց անոր՝ հզօրագոյն տէրութիւններն այ կ'ոչնչանան. հայրենասիրութիւնն է որ ձեր սրտերուն մէջ բռնած է իրերու նուիրական հրիտակ մը՝ ձեր զաւակներուն թողուած, ձեզի պիտի տայ ստաջիւն տեղը ժողովուրդներուն մէջ, եւ ձեզի վայելել պիտի տայ ազատութիւն ու անկախութիւն » :

Մուսթաֆա պէյ Բամէլ ունկնդիրներուն կը խօսի այնուհետեւ յոյսի եւ յուսահատութեան վրայ. կը փորձէ փաստել թէ՛ աստուածային Օրէնքը միշտ ուղած է որ Եգիպտոս ըլլայ բռնաւոր տէրութեանց ու փառամոլ ազգերու գերեզմանը : «Եգիպտոս արդէն զարմացուցած է բոլոր իմաստասէրներն ու բարոյապէսները, իր խորին

կենսաւորութեամբ եւ դէպքերուն դէմ իր մաքառումովը :

«Իր որդիները պէտք չէ յուսահատին, ազդի մը համար մեծագոյն չարքն է ինքզինք պակար կարծել միանալու եւ զօրանալու : Եթէ ուրիշ ազգ մը կրնա ըլլալ Եգիպտացիին ազդաները, բնականաբար չպիտի կրնար այսքան հանդարտութեամբ արհամարհել (sic) : Ազգ մը, որ ունի այսչափ մեծ իմացականութիւն եւ որ կը պարզէ ա՛յսչափ մեծ աշխատասիրութիւն, ի՞նչպէս կրնայ յուսահատել իր ապագայէն եւ իր մեծութենէն : «Ո՞վ կրնայ կասկածի ներքեւ զնել Եգիպտացիին ընդունակութիւնը, տուէ՛ք ֆէլլախի մը հաստատուն կրթութիւն եւ անողջ դաստիարակութիւն մը, եւ պիտի ունենաք մարդ մը որ իրական ծառայութիւններ պիտի ընէ իր հայրենիքին :

«Գալով Եգիպտոսի զինուորին քաջութեանը, անվիճելի ապացոյցներ կան այդ մասին, ճակատամարտի դաշտին վրայ :

«Ողջո՛յն, Եգիպտացի՛, հայրենեաց համար իր աջ բազուկն ես ու ապագայի յոյսը. մի՛ յոյսդ կտրեր Աստուծոյ չնորձէն, վասնզի նա՛ ազատեց հայրերդ մինչև ցարդ եւ զքեզ այ պիտի ազատէ » :

Ատենաբանն առաջ կը տանի իր բանասիրութիւնը, ծանրանալով մասնաւորապէս ազգային դաստիարակութեան հարցին վրայ : Դառն կշտամբանքներ կ'ուղղէ մեծափարթամ հարուստներուն, որոնք իրենց հարստութիւնը վատնած են պօստայի շահագործումներուն մէջ, փոխանակ ուրիշ կերպով՝ օգտակար ըլլալու հայրենիքին : Այդ առթիւ բարձրաձայն շնորհակալութիւն կը յայտնէ Ալ Օրաւ ընկերութեան, ազգային դաստիարակութեան գործին ձեռնարկելուն համար :

Յետոյ ընդլայնելով ազգային դաստիարակութեան հարցը, ատենաբանը գրեթէ այս բառերով կը բացատրէ միտքը. «Աստուգէ՛ք տղայոց թէ՛ իրենց մատող հասակէն, պարտին հոգով մարմնով հայրենիքին նուիրուելու : Ըսէ՛ք անոնց թէ՛ ազատութիւնն ու անկախութիւնը՝ կենսիքի ամենամեծ արժեքն են, իրենց երկիրը գրաւուած է եւ թէ՛ այս գրաւումը՝ իրենց վրայ կշտող մօթ մը եւ չարք մ'է : Թէ՛ իրենք, Աստուծոյ առջեւ պատասխանատու պարտին ըլլալ Եգիպտոսի երջանկութեանն ու մեծութեանը : Ըսէ՛ք նաեւ անոնց թէ՛ պարտին համերաշխ ըլլալ, իր երջանկութեան կամ զօրազուլութեան մէջ, եւ թէ՛ ժողովրդին պատակով մը յոռեգոյնն է անիրաւութիւններուն : Այս ամենը լա՛ւ հասկցողք մ'անց, իրենք են ապագային ու վաղուան ազգին մարդիկները : Անոնց առաքելութիւնն, անոնց հայրենասիրութիւնն, անոնց անվեհերութիւնն ու անոնց յանգրդուութիւնն պիտի կրնայ ծնիլ մարդ մը, որ բարձր բանէ հայրենիքի զրօշակը, առաջնորդէ Ազգը դէպ ի պատիւ եւ դէպ ի փառք . . . »

Յետոյ խօսելով հաւատքին ու հայրենասիրութեան միջեւ գտնուող կապերուն վրայ, ատենաբանը մէջ կը բերէ Պիզմարքի հուշար իօսքը. «Առէ՛ք ինձմէ կա-

ւատքս եւ, այն ատեն ինձմէ պիտի առած ըլլաք հայրենիքի սէրը » : Եւ ցոյց կուտայ թէ՛ իսլամութիւնն ի՞նչպիսի աղատական, ներողամիտ եւ գիտութիւններու բարեկամ կրօնք մ'է : Իր կրօնակիցները կը յորհորէ փայլուն ապացոյցը տալ իսլամութեան մեծութեանը, աշխատանքով, գործունէութեամբ եւ յառաջդիմութեամբ :

Մուսթաֆա Բամէլ կը յարէ, «Զուտ իսլամութիւնը թշնամին է ազիտութեան եւ մոլեռանդութեան, պատուիրելով հաշտ ու ներդաշնակ կենակցութիւն մը, քրիստոնեաներուն ու բոլոր կրօնքներուն դաւանողներուն հետ » :

Մուսթաֆա Բամէլ կը յայտարարէ բացարձակօրէն թէ՛ կատարեալ միութիւն կը տրէ Եգիպտոսներուն ու Միսլիմաններուն միջեւ եւ թէ՛ Եգիպտացիներն իրական համակրութիւններ ունին Եւրոպացիներուն ու Եգիպտացեան օտարներուն համար. իր անկեղծ շնորհակալիքը կ'ուղղէ Եւրոպացիներուն, որոնք իրենց աջակցութիւնը տուած են ազգային դաստիարակութեան շարժումին, եւ անով հաստատած են թէ՛ Եգիպտացիներուն չար իրենք այլ կուզեն Եգիպտոսի բարեբաւտութիւնը : Եօշափելով համաիսլամութեան (Panislamisme) խնդիրը, ատենաբանը կ'ըսէ.

«Եգիպտոսի մէջ հրատարակուող անգլիական թերթերուն թղթակիցները չեն անչցեր պիզմարք թէ՛ մենք մեր լրագրները պարզապէս կրօնական թերթերու վերածնոր ենք, խալափ եւ միսլիմաններու վրայ հրատարակուած յօդուածներովը. ի՞նչ սոսք անգլիացի գրագէտներուն : Մենք կ'ըզաղինք իսլամով եւ միսլիմաններով, ինչպէս որ իրենք այլ կ'ըզաղին իրենց երկիրը ու իրենց կրօնքով :

Ու չեմ ըսեր թէ՛ ի՞նչպէս զբաղեցան Հայաստանով ու Հայերով (. . .) : Մենք ամեն օր կը լսենք որ եւրոպական տէրութիւններն իրկնց պետական մարդիկներուն բերնով կ'ըսեն թէ՛ իրենք միսլիման երկիրները գրաւած են բարեկաւելու կացութիւնն ու հոն քաղաքակրթութիւն ու արդարութիւն տարածելու համար :

«Մենք իրենցմէ կը խնդրենք ինչ որ խոստացած են, կ'աղերսենք, մարդկութեան քաղաքակրթութեան ու պատիւին անունով, միսլիմաններուն հետ չը վարուի անարդարութեամբ : Անոնց ուշադրութիւնը կը հրաւիրենք ամեն մէկ սիրտը արարել վրայ, զորս կը գործեն միսլիմաններուն դէմ, եւ համոզուած ենք թէ՛ լաւագոյն ծառայութիւնը կը մատուցանենք անոնց՝ արդարութիւնը խնդրելով. վասնզի բռնապետութիւնն անկերելի է քաղաքակրթութեան այս դարուն մէջ :

«Գիտեմ, զմեզ կ'ամբաստանեն թէ՛ մենք Եւրոպիոյ դէմ կը զրպոնենք Միսլիմաններն, եւ կը զրգենք զանոնք որ արտաքին Եգիպտոսէն եւրոպական տէրութիւնները, բայց ո՞ր խելքի տէր մարդ կրնայ այդ կերպ ամբաստանութիւն մը յերիւրել : Մենք յիմարենք չենք որ անկարելին խնդրենք, բայց իրաւունք ունենալ կը կարծենք մեզի եւ մեր կրօնակիցներուն համար խնդրելու եւրոպական տէրութիւններէն իրոստացուած երջանկութիւնը :

ցած կամ ճանչցնել տրուած արժանիքի մը վրայ՝ իսուլ յամառութեամբ իրենց անգամ մ'ըմբռնածը միայն պընզեղով վայրկեան մ'իսկ չեն ուզեր լուրջ վերլուծումով մը գտնել բուն արժանիքը, ու կը շարունակեն ցցել միշտ դէմը իրենց անգամ մը հասկցածը լոկ, պարզապէս, ուրկէ ընդհանուր համակերպում մը :

Լաւ գիտնանք սակայն որ Եւրոպային մեծ քայլեր առնել տուողը՝ քննադատութեամբ լիութի ազատութիւնն է զոր կը լրափեն ճշմարտութեան ու զատուութեան խուզարկու անյազուրը միտքեր :

Չորքոտանիները հորիզոնական զիրքով կը տանին սահմանափակ կեանքերին, մինչդեռ բնութիւնը՝ մեզ ուղղահայեաց զիրքը պարզեւած է որպէսզի դէպ ի վեր պանայ մեր միտքը, ու բարձրին, երկնքին լոյսն ու ճշմարտութիւնը շնչապակի մեր ճակատին վրայ ընդունինք :

Ա՛րդ, կը կրկնեմ, մեր մեծ Այվազովսկին՝ յօրինողի (faiseur) մ'եղական յատկութիւններն ունէր մանաւանդ. պարզ ժողովուրդին ընթեռնելի գիրն էր անոր նըկարչութիւնը. չունէր նա բոլորովին իսկապիպ, ինքնուրոյն տաղանդ. ան՝ իր բնութեան ըմբռնումի կերպովը՝ ժողովրդին էր. նմանօրինակ էջերու շարունակելի հատոր մ'էին իր գործերը. սակայն ու հաճոյականը միեւնոյն ձեւերը կ'առնէին իր վրձինին տակ. ընա՛ւ հաճոյականը՝ իր ամենէն անոյշ հորիզոնէն, սոսակալին՝ զարշակի կողմէն՝ ցուցադրուած չէր իր նկարներուն մէջ. գիծ ու երանգ միշտ շոյող, ժողովուրդը չ'ահարեկելու հանգամանքն ունէին պարզապէս ժողովրդին աչքովը կը տեսնէր :

Ես պիտի ուզէի որ երկնքներու երկնքին բարձրերէն հոռեցնէր իր խաղաղ օդերու թափանցկութիւնն եւ անուշութիւնը, ու զփոխներու անգնդային խորքերէն գողնար մթնութիւններու թանձրութիւնն ու սարսափը, իր «Ովկիաններու անկը լուսնի» համար : Իր

մէկ «Փոթորկալի ովկիանս»ին մէջ, մէկ անկեւնը նաւու մը տախտակամաճը ներկայացուցած է, որ բոլորովին կ'եզծէ նկարին շարադրութիւնն ու ծովուն վրայ երկնցած պատշգամի մը տպաւորութիւնը կը թողու, մանաւանդ երբ կը նշմարէք հոն նկարին ու քանի մը տիկիներ, որոնք այդ անպիսի ալիքներուն հանդէպ, — որք մինչեւ իրենց ոտքերը կ'ողողեն —, ընա՛ւ կնոջ յատուկ վարկին նշոյններ չեն տար. այդ տիկիներուն պէս տեսակ մ'անտարբերութեամբ պիտի զիտէիր Այվազովսկին սոսկումի նկարները. մինչդեռ անկողնաւկալ, անկախ, ինքնուրոյն միտքեր եկած են, սոսկումն իր ունեւելովութեամբը նկարող, որոց հանդէպ ամենէն քարացեալ սրտերն անգամ՝ երբ հեռանալ ուղէին ատոնց նկարներու առջեւէն, պիտի զգային կտրատումը սոսկումին հաստու կտորներուն իրենց սրտին մէջ :

Երբ դու՛, սիրելի՛ ընթերցող, գտնուիս ծովեզերք մը, անուշիկ խաղաղ գիշերով մը, ծփծփուն ալիքներուն մէջ ցուցցող հեղեղ լուսնի ցայտերով, թեթեւ պիտի զգաս ինքզինքդ, ու անոյշ տամիկութիւն մը հետզհետէ պիտի համակէ անձը, ու պիտի զգաս որ այդ քաղցր ու զով պատկերը՝ հանդարտիկ, պարզօրէն քաջուած վրձնի մը փայլալուսնեղով յօրինուած է : Պիտի սոսկաս, ընդհակառակը, ակոսանիք սեղմած, ամբողջ մարմնիդ ու մարմնիդ անգններու անհատում հարուածներու տակ, սարսուռով մը վեր ի վայր յուղուած, սոսկալի տեսարանի մ'առջեւ. ու այդ ամբողջ զգացածներդ՝ արձագանգն կը կամ պիտի ըլլան, ծանցոտ, պղտոր սեւերու մէջ թաթխուած վրձններու խօլ հարուածներուն, որոնք սարսափը ներկայացնող նկարի մ'ամբողջ մակերեսովը պիտի ծածկեն Մինչդեռ մեր նկարին միեւնոյն վրձնը կը գործածէր սոսկալի ու հեղեղի, քիչ տարբերութեամբ գրեթէ միշտ միեւնոյն ալիքները ցցելով դիմացը, ցողցողուն ու ցնդուն՝ դէպ ի հորիզոն, իր փոթորկալից նկարներուն մէջ. ու միեւնոյն կերպով տեսնուած, մի-

եւնոյն ցուցցումի փայլովը ոսկեղօժուած, լուսնազարդ ծովերուն մէջ. ու փրփուրներու սովոր ու ստացուած շղթայունները միեւնոյն դարձուածքներով կապուած, գրեթէ իր ամեն փրփուրէզ ալիքներուն մէջ. ու մանաւանդ ատոնց դասաւորման ճանձրացուցիչ միօրինակութիւնը վեր հանելով միշտ, ինչ որ կ'ապացուցանէ (արուեստագէտներու լեզուով) անոր հանձարին տարօրինապէս մեծ ու երեւակայութեան անհաւանապէս բարձր ու խոր չ'ըլլալը :

Գարեբու հոսանքովը աշխարհիս վրայ նետուած հազուագիւտ նկարիչներ իրենց յատուկ աչքը, տեսնելու մասնաւոր կերպը ունեցած են. գտնն ու քաղցր յուզումներ իրենց ամենէն խոր ու բարձր գիտակէտէն նկարուած են անոնց միտքը արարող նկարներուն մէջ. ինչ որ կը պակսէր Այվազովսկին, որ անպիսի ժողովրդականութիւն չ'առած էր արեւելքի մէջ :

Ի՞նչ կը կարծէիք որ բարձր նկարիչ մ'այդչափ շուտով պիտի հասկցուէր ու գնահատուէր ժողովրդէն, մանաւանդ արեւելքի ժողովրդէն :

Հաւաստե՛ք որ ճշմարիտ մեծերը միշտ մեր գլուխէն վեր, երկնքէն կախուած պիտի մնան, ու շատ քիչեր զանոնք պիտի նշմարեն, մարդկային ազիտութեան գիտ թանձր խաւերուն մէջէն. ու անոնք ատոնց համար միայն կ'արձակեն վարսափ լոյս մը փառաւոր, ճաճանչաւոր, ու ատոնց երկիւզած սքանչացումը միշտ հանելուկ մը պիտի մնայ հասարակ ժողովրդին համար :

Զեմ ուզեր վիրաւորել հայ սրտեր, օտար հմուտներու քննադատութիւնները ծանօթացնելով ազգիս, Այվազովսկիի մասին :

Պիտի փափաքէի որ քիչ մը պազարուէ ըլլայինք, լաւ դատել գիտնայինք մեր ամեն գործերը. ու բացուէին մեր աչքերը՝ իրենց յամառ կոյրի գնացքին մէջ, ճաճանչաւոր լոյսերուն հանդէպ :

Ե. ՏԵՄԻՐՅԱՆ

«Անգլիացի գրագետներն ինչպէս կրնան մեր ընթացքը քննադատել այսպիսի պարագաներու մէջ :

«Մտքի եւ հիշի ազատութիւնը, որով այնքան կը պարծնան Անգլիացիները, մեզ համար ալ նոյնպիսի լայն ու նոյնպիսի կատարելի չէ՝ որչափ ուրիշներուն համար : Ինչ օգուտ ունի ուրեմն ունենալ այդ ազատութիւնը, եթէ չենք կրնար պահանջել հաւասարութիւնն ու արդարութիւնը . . . : Եւ եթէ եւրոպական տէրութիւններն իրօք փափագող են մասնատկաններու քարեկեցութեան, ինչ կը վախճան մեր գրուածքներէն, քանի որ մեր բարեկեցութիւնը միայն կը խնդրենք» :

Ատենաբանը վերջացուց իր ճառը, գովելով Եղիպտացիներուն յարուստ վիճակը՝ Սուլթանին եւ անոնց անխախտելի անձնութիւնը՝ Օսմ. կայսրութեան, ըզգուշացուց զանոնք դաւադիրներէն («»), որոնք կը ջանան թուրքեան պոպոկները անոնց աչքին եւ խզել բարեք շարքերութիւններն Անոր ու Եղիպտոսի միջեւ :

ԱՆԴՈՒՆԴԸ

« Զննարիտ գիտունները փորձառուներն են » ըստուած է, բայց խնդիր է գիտնալ թէ՛ մէկը պէ՞տք է որ սպագէ կեանքի պայքարներու, ժամանակի հոլովման եւ վերջապէս ամեն տեսակ պատահական արկածներու՝ որպէս զի այլեւս փորձառու նկատուի. — ընտանաբար ո՛չ :

Թէեւ անցեալը յաճախ փարոս մը, հրեղէն սիւն մ'է, որ կը լուսաւորէ ներկան ու կը կանխատեսէ ապագան, բայց եւ այնպէս մի ազգ, ժողովուրդ կամ անհատ, ո՛ր դասակարգին ալ պատկանի, երբ իւր ժամանակակից պահանջներու գիտակցութիւնը կը կարողանայ ձեռք բերել, զգալ ու գտնել, նա այլեւս փորձառու կը նկատուի : որովհետեւ գիտակցութիւնն է՝ որ կը ներշնչէ մարդուս ինքնաճանաչ ու պարտաճանաչ լինել, կշռել ներկայի նպահանջներն ու գծել ապագայ գործունէութեան եղանակն եւ ուղղութիւնը :

Չարիք մը կատարուելէ վերջ՝ զգուշացողներ շատ կ'ըլլան, իսկ կանխատեսող՝ հազիւ ինն : Թէ ինչո՞ւ :

Նոյն իսկ մեր վրայ լուսաբաններ զայս, մինք՝ Հայերս թէեւ արիւնյալի անցեալին մէջ կրեցինք ամուսնադաւն ու խրատական դասերը, ամենահրահանգիչ ու մեծամեծ կորուստներով ստացուած գործնական փորձառութիւններով, յաճախ մեր ձեռքի գաւազաններով իսկ գանակոծուեցանք, սակայն եւ այնպէս երբէք չի կարողացանք պէտք եղած գիտակցութեան համար, առանց որոյ կարելի չէ կանխատեսել մեզ ո՛ր եւ է բարիք կամ չարիք, գիտակցութեան պակասն է որ զմեզ կասեցուցած է յատկապէս մեր ասպարէզէն, որով մընացած ենք այնպիսի արգահատելի ու յետադիմական վիճակի մէջ, որուն իբր դարման նկատուած է ստեղծել « Լաւրան-Լիթերգատու » , որպէս զի մեզ անանգուի մեր ժամանակակից պահանջներու գիտակցութիւնը, զի ատով միայն կարելի է բարձրացնել մեր մտաւորականն ու բարոյականը, առ այս ի բոլոր սրտէ գո՛հ պէտք է ըլլանք որ՝ հակառակ ամեն խոչընդոտներու, ծաղրելի խճճանքներու, « Նոր Օր » ը ծագեցաւ եւ իր էջերէն որք Լաւրան-Լիթերգատան սիրտն ու բերանն են միանգամայն, գրկաբաց պատրաստ են հիւրընկալելու այն ամեն յոգուածներն՝ որք հանրութեան սխալ ըմբռնումներն ուղղելու, զեղեկոտ քայլերն յատկապէս թեան շաւղին մէջ դնելու եւ վերջապէս հանրութեան արմատացեալ մոլորութիւններն ու վէրքերը բուժելու եւ մաքրելու կը ծագային :

Ան այսօր սոյն նպատակաւ պիտի ջանանք մի քանի պարբերութիւններով ուրուագծել այն վիճը, անհրաժեշտ, ուր անխոնկմաբար կը դիմէ հայ երիտասարդութեան բաւական ստուար մի մասը՝ ինչպէս որ ինչպէս :

Կ'զգամ թէ գրեթէ յուշարարի զերն է որ կ'ըստանանք, զի այս տեսակ նիւթերու վրայ, շատ աւելի բարձր, ազգու ու հրահանգիչ գրութիւններ հրապարակելու են, սակայն, ինչպէս կանխաւ յայտնեցինք, նկատելով որ մեր ժողովուրդը զիւրին չէ մէկ երկու փորձերով օգտուէտ համոզումի մ'ատաճնորդել, աւելորդ չենք համարի կրկնութեանց դիմելը :

Թէեւ այս տեսակ կրկնութիւնները յաճախ տաղտուկ կը պատճառեն հասարակութեան, բայց ամեն պարագայի մէջ կրնան իրենց օգուտներն ունենալ եւ զէթ չնստակար չեն նկատուիր, ինչպէս խճճանքներով լին, անձնական գձուձ շահատակութիւններու յագուրդ տալու անմտութեամբ, ենթագրութիւններու վրայ հիմնուած եւ նոյն իսկ զրպարտութիւններով :

(*) Թուրքիոյ կայսրութեան անկումը՝ զարուստ պահանջն ու իր վարչութեան հետեւանքն է, դաւադիրներ չունի ան ու նոր չպիտի պոպոկնայ : Երանի՛ թէ հայրենասէր ատենաբանն իր ա՛յդքան գեղեցիկ ճառը չը փակէր այս տխուր վերջաբանով, որ կ'աւերէ ճառին հոյակապ չէնքը :

ձուլուած յօդուածներ, որոց զգալիորաբար այժմեան հրապարակի վրայ գտնուող եւ ժողովրդական անունը կրող քոյր թերթերու սխալները հիւրընկալ ու գաւակից կը հանդիսանան, անշուշտ միտքերը պղտորելու ու ժողովրդի ոչխարամտութիւնն իրենց ինքնաբերական ծառայեցնելու զիտու մով՝ կ'երազեն քանիզ ալ հաստատութիւնները, որք իրենց հիմնարկութիւնն է՝ վեր մշտատես արհաւիրք մը թողած են այդպիսեաց արտերուն մէջ : Չգայով որ վաղ կամ անագան յօդուած հանրութեան կրնան զիրենք զիմակագերմ ընել . . . :

Ներկայ յօդուածովս հետի լինելով այդ տեսակ գձուձ խնդիրներէ, մանաւանդ որ « Նոր Օր » ի ծրագրին եւ ուղղութեան հպատակելով՝ որ է պահել իւր բարձրութիւնը, պիտի ջանանք ըստ կարելոյն խաղաղութեան նստակար ու քայքայիչ արտէն զգուշացնել հայ երիտասարդութիւնը, զի զգայուն սիրտ մ'երբէք չէ կարող պահել զատապարտելի լուծութիւն մը, տեսնելով իր արեւնակցաց գանավիժումը :

Թողով Բագոսի եւ Ատողկան տաճարները, որք երիտասարդութեան անական կորովին ու գեղին գեւրեզմանը կը դառնան, անցինք այն վայրը, ուր պիտի գտնենք զայն մերկացած բարոյական, ներթափանց ու հոգեկան ազնուութիւններէն : զայլուհար, կայսրոյ չըրջանակ մը բողբոջած, նուազկոտ աչքերուն շուրջը, զողջուն ձեւեր, կ'ընտ ծուկներ, ցցուած ուսեր, անա մեր երիտասարդութեան մէկ մասին յատկապէս թիւնը . . . : Հայրենիք, կեղեցիկ, ընտանեկան յարկ ամենքն ալ հոն են, հո՛ն, խաղատու՛նը, քսակին ու պատուոյն քաւարանը :

Նորս սիրող չի արտիք, երբ Մայր-հայրենիքէն հասած զլլխեցուցիչ լուր մը վեր 'ի վայր կը շըջէ ամեն ճշմարիտ հայրենասիրի սիրտը : նա այդ բարատու մը կ'զգայ ա՛յն ատեն միայն երբ խարդախեալ մեքենային անիւը կը դառնայ : նա արտաորոյ կ'սպասէ բաղդին որ ժպտի իրեն, ո՛վ յիմար պատրանք . . . նա երբէք չէ կարող մտաբերել թէ՛ անուղղակի կամ ուղղակի՝ աւազակը, խաղատան պետը, ոտքի փոքր հպուստով մը կարող է փափաքած տեղը կանցնել մեքենան, տխմարը կը հրապուրուի մի քանի անձանց յանկէն, որք խաղատիրով վարձկաններն են : Առաւօտ կը լինի, մինչ ցլետին միջինը կորուսած է, պահ մ'առաջ վիճքը դրուատող, փայ խայող խաղապետը կ'արտաքսէ զանի խաղատէն, եղկելին օձիքը վեր դարձուցած, աւելի ք'անալով քան թէ քալելով՝ գաղտագողի դուրս կը սպրդի այդ գողերու որջէն, կասկածոտ նայուածքներ պատցնելով շուրջը, վախճալով որ զինք չտեսնեն, որովհետեւ զեւ իր մէջ բողբոջին չէ մտած բարոյակարը : արժանապատուութեան նմանող անզօր զգացում մը տարտամօրէն իրեն կ'զգացնէ թէ՛ ո՛րքան, պիտի արհամարհուի, լքուի ամենէն, երբ իմանան թէ խաղատի մ'է ինք, թերեւս գործէն ալ արտաքսուի Հեռու՛ն, ծերունի ծնողք մը, զեւտափ կ'լին մը, այլեւս յոյսերին կարած զրո՛ւմ աղաղակելէ, զէթ միմիջարուելու համար նամակի մը կ'սպասեն : երիտասարդը գոնացուցած է նոցա պահանջը, նամակը գրուած է, (անշուշտ մի օր գրամ չունենալով՝ խաղատուն չկրնայ երթալէն օգուտ քաղելով) բայց միշտ զրպանը կը մնայ, զի նամակագործի գրամը՝ շահագործելու նպատակաւ խաղատան գողներուն գումարը կը յաւելու : անհոք նամակ մը, չկարենալով տոկալ նոթութեան՝ կրօնափոխ եղած են ծերունի ծնողք . . . ինչ փոյթ . . . Ուրիշ մ'իւր տան կանկարաբար, եթէ մնացած է, գաղտուկ մը կը ծախէ, վրայ տալով, պատիւն ու խիղճը միանգամայն, ո՛վ ստիկուս, իր կնոջ եւ կամ քրոջ, համեստ զարգերն իսկ գողնալու չարի կը նուստանայ : Եւրոպական հաստատութեան մը մէջ գոնացուցիչ պաշտոնով հայուն վտանգելի անունը բարձր պահած միջոցին՝ յանկարծ կը խորատուցի տիւրմերուն մէջ . . . ո՛վ խաղատի : հայութեան նախատի՛նը, թօթախի թմրութիւնը, անդունդին եղեր 'ն է՝ ուր կը զեղբրիս անզգալաբար, քայլ մ'ալ եւ անա գանավիժումը անխուսափելի է, վանէ աչացք խաւարը, անա ծագեցաւ « Նոր Օր »-ը, բոլոր զօրութեամբ փարէ նորա առ քեզ կարկառած փրկարար բաղկին՝ եթէ մէջը մնացած է տակալին արժանապատուութեան զոյգն զգացում մը . . . :

ՄԵՂՈՒ

Այդ երկայն ժամանակի միջոցին, պաշարահանրը անշուշտ փետրայի անկողիններու մէջ չպակեցան եւ նախանձելի օրեր չ'անդուցին ժամանակ եղաւ որ իրենց սեղանը արեւնոտեցաւ անակրեկալ ուռմի մը առանց ձեւակերպութեան ներս ձգուելովը : զիւր եղաւ որ իրենց քունէն ընդոստ արթնացան հեծ ու կոծէն ընկերի մը, որ յանկարծ գնդակահար կ'ըլլար, երբ թերեւս ինքզինք իր սիրելիներուն զրկաց մէջ կ'երազէր :

Մանաւանդ հրամանատարը՝ գնդապետ Պատէն-Բուէլ՝ քիչ խելք եւ միտք յոգնեցուցած է՛է, իր փոքրիկ խումբով զիմադրելու համար սակաւաթիւ թշնամոյ մը, որ աւելի կը թուէր ըսել Անգլիացուց . . . Մենք ներս մտնել չ'ենք ուզեր, բայց չ'ենք ալ ուզեր որ զուք գուրս ելլէք : Սանկ խելքիկ կենանք, դուք մեզի նայեցէք, մենք ձեզի նայինք, ու թէ՛ մեր պայմանագրութիւնը իրարու յիշեցնելու եւ թէ՛ քիչ մ'ալ աշխարհին հասկցնելու համար որ աչք կ'ապուկ չ'ենք խաղար, մերթ ընդ մերթ մի քանի գնդակներով եւ ուռմիքով բարեկենք զիրար :

Այս կամ գրեթէ համանման պայմաններու տակ պատերազմը չափազանց տաժանելի ըլլալու չ'է համեմատաբար, մանաւանդ եթէ առատ ուտելիք եւ խմելիք կը գտնուի ձեռքի տակ, ինչպէս որ էր 'ի Մէյֆրինկի :

Թերեւս իրեւ պարզ մարմնամարզութիւն մը պիտի նկատէին ուրիշ ազգեր այս պատերազմը : Բայց Անգլիացիք՝ զերազանցօրէն խաղաղասէր եւ—ինչպէս կ'ըսէր մեզի ծանօթ քարտիչ մը—քրիստոնեայ ժողովուրդ՝ այս վերջին վախճան տարուան մէջ քառասուն պատերազմ մղած ըլլալով, միւս մարտիկ, բայց 20—30 տարիէ 'ի վեր սուրբ պատեանին մէջ պահող ազգերէն աւելի լուրջ տեսնող պատերազմին 'ինչ ըլլալը՝ Հետեւաբար երբ Մէյֆրինկ ազատեցաւ, Մեծ-Բրիտանիոյ լրջամիտ եւ ծանրաբարոյ ընակիչ՝ երբ միաձայնութեամբ տօնախմբեցին այն օրը, եւ որչեցին տօն պահել այն երջանակուէտ օրուան ամեն տարեգարձը :

Հայրենասիրական զգացումն արտայայտութիւն, պիտի բռնէ, այնպէս չէ՛ : Եւ ե՞տքը :

Քիչ մը համբերութիւն :

Ի հարկէ գործողութիւն մը ունի գործող մը, որ այդ գործողութեան պատասխանատուն է : Գործողութիւն մը ինքնաբերաբար գոյութիւն չունենալով, անոր մասին եղած մի որեւէ արտայայտութիւն ուղղակի գործողին կը վերաբերի :

Մէյֆրինկ ազատեցաւ, սա մի գործողութիւն է : ազատողն՝ այսինքն գործողը ո՛վ է : Չենք կրնար բսել թէ օգնութեան համող խումբն է այդ : դա միտքն սատարեց ազատութեան : Եթէ պաշարուողներ լաւ չը պաշտպանէին, քաղաքը թշնամոյն ձեռքն ինկած պիտի ըլլար : Ուրեմն գործողը գնդապետ Պատէն-Բուէլի խումբն է : Բայց որովհետեւ պատերազմի դաշտին վրայ սոսկական զինուորի արեւը ջուրէն աւելի աժան է, եւ ամեն պատիւ կը պատկանի հրամանատարին միայն, զոր սովորութիւն եղած է վտանգէն ըստ կարելոյն հեռու պահել հոս ալ Մէյֆրինկին ազատման պատիւը պէտք է վերագրել միայն գնդապետ Պատէն-Բուէլի :

Մըզ կըր այդ ազատումը կը տօնախմբուի, աւելորդ է ըսել թէ իրապէս տօնախմբուողն է՝ ազատողը :

Տօնախմբութիւնն սրբութեան համար՝ ժամանակի եւ քիչ մ'ալ կանխադատուի գործն է միայն : Եթէ առաջին օժանդակը կը պակսի մարդկութեան, երկրորդը մեր ծուծերուն մէջ թափանցած է : Հետեւաբար խիստ հաւանական է որ մեր թոռները պիտի կարդան օր մը Անգլիական օրացոյցներուն մէջ :

† Գլխ. Տօն Սրբոյն Պատէն-Բուէլի գնդապետին . . .

Այն պարագային, ո՞րն է այն քրիստոնէական Եկեղեցին որ իրաւունք պիտի ունենայ մեղադրելու Անգլիական Եկեղեցին :

Պ.

ՆԱՄԱԿԱՏՈՒԹ

ՏԱՄԻԷԹ, Տիար Ա. Գ. Յար. — Ստացանք Ձեր զրկած նամակագրումը, չնորհակալութիւն Ձեր համակիր արտայայտութեանց համար :

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 10 ՅՈՒՆԻՍ 1900

5055	2518	1116	495	408	65
396	533	1461	1603	2255	2858
3161	3187	3842	4801	5244	5634
6812	6929	7303	7266	7649	8253
	8215	9089	9326		

Տպագրութիւն Ա. ԴԱՐԻՆՆԱՆ — Պագար Մուրուր

ՍՈՒՐԲ Մ'Ի ՀՈՐԻԶՈՆ

Ամենահասարակ զէպքեր եթէ մի քիչ ուշադրութեամբ, քննուի զարմանալի եւ հետաքրքրական դասեր կուտան :

Մէյֆրինկ, որ Անգլիական Պէշուանայի Հիւսիսային-Արեւելեան քաղաք մ'է Թրանսիլանի սահմանագլխին վրայ, Պօթրերուն կողմէն եօթն ամիս պաշարուած մնալէն ետքը, վերջապէս ազատեցաւ Հիւսիսէն եւ Հարաւէն օգնութեան հասած զօրքերուն միջոցաւ :

Le gérant, J. MUNIER.